



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



( Ա. ՏԱՐԻ )


15 ՅՈՒԼԻՍ 1900

( ԹԻԻ 9 )



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վսանգին դարմանը, Երուանդ Սրմաքէշխանլեան. — Հարսնուկը, Զապէլ Նորիկեան. — Գիտական արձագանգ (Լէր-Խնդր-Նաշե՛լ-Է-Գոյնը), Յ. Ս. Փա-  
փազեան. — Յուցահանդէսին տուրչըր, Ա. Գալիս. — Հայ կիներն ու հայ որ-  
բերը, Ի. Ն. — Նախամօր (ա-ն-ր-է-դ), Թարգ. — Որբախնամը :



ՏԳԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

ՊՊ Շ Ա Ի Ի Ղ ՊՊ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր. , վեցամսեայ 5 ֆրանք :  
Արտասահմանի » տարեկան 12 ֆր. , վեցամսեայ 6 ֆրանք :  
Ամերիկայի » » 2 1/2 ամլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

---

Բաժնեգին , նամակ , յօդուած , լրագիր և զիրք՝ պէտք է  
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

---

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

---

Շարիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատա-  
րակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

# Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԳԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ՅՈՒԼԻՍ 1900

Թիւ 9

## ՎՏԱՆԳԻՆ ԴԱՐՄԱՆԸ



ուրբէշէն երիտասարդ հայրենասէր մը, Պ. Արամ Մալխազունի, բուղբի ուժգին ձայն մը կը բարձրացրնէ այն անասրբերութեան դէմ որով արատահմանի հայութեան նիւթապէս ու բարոյսապէս ազդեցիկ մասը կը վերաբերուի անսիրտ ու անպաշտպան երիտասարդութեան հանդէպ:

կը դրէ.

Թրքական սոսկալի կոտորածներից ահաբեկ հայ երիտասարդներ արտասահման նետուեցան: Անթուրիան դէմ մաքառելու միջոցները իրենց չէին պակսեր. Ռոտտիֆոցին ու Սամաթիացին իրենց արհեստներով, Վանեցին ու Մշեցին իրենց բազկին ու ժով սկսան աշխատիլ ու վաստկիլ. բայց այդ անսիրտ կեանքերը հզօր ու գորովալից զեկավարներու կարօտ էին արտասահմանի փշոտ կեանքի պայքարում ուղիղ ճամբով ապրիլ կարենալու... Պուլկարիոյ եւ Ռումանիոյ անբարոյական վայրերը զոհեր

էին որոնում. ու հասարակաց շէնքերի օտարուհիները մեր երիտասարդութեան միամտութիւնից օգտուեցան. քաջ Ռոտտիֆոցիին արդար վաստակը թուաւոր համբոյրներով խլեցին, կարիճ Մշեցիին ու Վանեցիին չարքաչ կեանքի վաստակն էլ այդ ապօրինի միջոցներով յափշտակել սկսան: Եթէ վնասը միայն նիւթական եղած լինէր, գրիչս չէի թաթխեր այս արեւնոտ սողերը գրելու. բայց հայ երիտասարդութիւնը նիւթապէս փճանալով վրայ տուաւ նաեւ հայրենիքում ստացած մաքուր բարոյականը. վրայ տուաւ նաեւ իր քաջ նախնիքներիցը ժառանգած ուժն ու կորովը: Փայլուն աչքեր սեւ յօնքերի խորերը թաւալեցան, հսկայ կազմեր քայքայուեցան ու հարիւրաւոր զեռասի կեանքեր անբուժելի ախտերով վարակուած ողեսպառ ինկան խոնաւ խրճիթների խորքերում կամ մուսյլ հիւանդանոցների տխուր անկիւններում...:

Այնքան սարսուալի իրակամութիւն մըն է այս ուր պահ մը իսկ կարելի չէ տարակուսիլ անոր աղէտալի հետեւանքներուն մասին: Դժբախտութիւն է որ արտասահմանի մամուլը անձնական ու կու-

սակցական պայքարներով գրաւուած, գրեթէ չզբաղիր այս սեռակ հարցերով, որոնք մեր գոյութեան հետ ուղղակի կապ ունին:

Չորս տարիէ ի վեր, Եւրոպայ, Եգիպտոս ու Ամերիկայ ապաստանած հայ երիտասարդութիւնը, մանաւանդ մտաւորական զարգացումէ զուրկ մասը փոխանակ նիւթապէս ու բարոյապէս օգտուելու միջավայրի նպաստաւոր պայմաններէն, տեսակ մը ինքնամոռացմամբ, հետեւեցաւ հոտոնքի մը որ արագալազ կը սորաբ գէպի կորստի սնդունդը: Անկասկածօրէն, այս վիճակին գլխաւոր շարժառիթներէն մէկն է այն սանձարձակ ազատութիւնը, կեանքի անկաշկանդ վայելումը զոր հայը, թրքական ճնշող հեղձուցիչ մթնոլորտին մէջ ապրող հայը, յանկարծ դատու արաստանմանի մէջ, ազատութիւնը, զոր տարիներէ հետէ ձեռք բերելու համար կուտելու, արիւն թափելու վրայ ենք, կարծես աղէտ մը ըլլալու վրայ է արտասահմանի մէջ: Աւ կարծես մենէ շատեր ուզեցին ապացուցանել թէ իրենք որքանի չեն անկախ կեանքի բարիքներուն:

Եւ սակայն, այս ողբալի վիճակին պատասխանատուութիւնը որուն վրայ կը ծանրանայ իսկապէս, առնոնց որ զիսակցութենէ ու զարգացումէ զուրկ ազգին ներկային ու ապագային սնտորբեր՝ այդ վիճակը առաջ կը բերեն, թէ անոնց

որ իրենց կոչումովը, նիւթական, բարոյական ու մտաւորական գերակըշտութեամբ կերպով մը զեկավարները, առաջնորդները կը սեպուին ամբօխին:

Կարելի չէ տատամսիլ, պատասխանատուութեան ամենամեծ բաժինը այս վերլիններուն վրայ կը ծանրանայ, ու մեծ ճնշողութեամբ Ասիկայ այնքան սկներեւ ճշմարտութիւն մըն է որ զայն ապացուցանելու ամենապզտիկ փորձն իսկ չենք ընել՝ կարծել չաարու համար որ մեր ընթերցողները անհասկացող միամիտներու տեղ կը դնենք:

Բայց միւս կողմէ հարկ կը սեպենք քանի մը առջով մտանանիչ ընել այն միջոցները որոնց գործադրութեամբը ամենամեծ հաւանականութեամբ բարոյական ու նիւթական անհաշուելի կորուսանելու առաջըը սոնտամ կըլլար:

\*  
\* \*

Իբրև սկզբունք՝ վերջնականապէս պէտք է ընդունիլ որ արտասահմանի մէջ մեր այս ժամանակաւոր ընակութեան միջոցին անցում անտարբերութեան, թուրութեան, ինքնամոռացման ամէն մէկ վայրկեանը ծանրակշիռ կերպով պիտի ճնշէ մեր ազգային ճակատագրին վրայ, նոյն իսկ մատուար ապագային: Անգարմանելի կերպով ապիտաւոր ապուշութիւններէն մէկը գործած

պիտի ըլլանք եթէ մեր արդի կացութեան թանկագին առաւելութեան բոլոր արժէքը չկարենանք ըմբռնել և անկից դոնէ նուազագոյն օգուտը քաղելու աննշան ընդունակութիւնը ցոյց չտանք:

Մեր վրայ թափուած անհաշուելի աղէտները մեր ամենէն ազէտը խելացի ու փորձառու ընելու էին, այնպէս որ ամէն մէկ հայ, որ արտասահմանի ազատ օգը չնշելու համար առն անդ, գործ ու շահ ձգած փոխած է, ինչ աստիճանի վրայ ալ գտնուի, հարկադրուած էր ճշգիւ հասկնալ իրեն բաժին ինկած բարոյական պարտաւորութիւնը: Մեր հիմնական ապրած միջավայրը, այսինքն քաղաքակրթութիւնը, ամենէն մեծ բարոյականով ու ամենէն ընդվզիչ անբարոյականութեամբ անթեղուած է. վա՛յ մեզի եթէ մեր ընտրութեան մէջ սխալեցանք:

Բայց որովհետեւ ամբողջ միշտ առաջնորդուելու պէտք ունի, գիտակից ու զարգացած դասակարգին կիյնայ մանաւանդ զայն շիտակ ճամբէն վարելու գործը: Գաղթականութեան մեծ հոսանքին գոյանալէն, այսինքն չորս հինգ տարիէ ի վեր, ոչ մէկ անգի մէջ լուրջ ձեռնարկ մը եղաւ ժողովրդեան ընթացքը զրականորէն գծող. ոչ որ մտածեց զանիկա բարոյական եւ ֆիզիքական անկումէն զերծ պահելու միջոցներուն վրայ, որոնք սա-

կայն այնքան պարզ էին և այնքան դիւրաւ գործադրելի, ինչպէս լրասարաններու հաստատումը և մտանամարզական ընկերակցութիւններու կազմակերպութիւնը:

\*  
\* \*

Թուրքիոյ և Ռուսիոյ հայերէն ինչ տարբերութիւն պիտի սեննայ ուրեմն արտասահմանի հայը, եթէ ազատ մամուլի հետ չունենայ նաև ազատ համարձակ խօսելու և արձակ սանձարձակ շարժելու առաւելութիւնը, զոր միջավայրը կընծայէ իրեն:

Եւ մտածել որ Եգիպտոս, Պուրկարիա, Ռումանիա, Ֆրանսա և Ամերիկա՝ այսօր առնուազն երկու հարիւր հայ անհատ պարունակող բազմութիւ քաղաքներ կան, որոնց մեծագոյն մասին մէջ հայ լսարան գոյութիւն չունի, իսկ մարզանքի ընկերակցութիւններ, օ՛հ, յիմարութիւն է զայն մտքէ անցընելն իսկ...

Լսարանը լաւագոյն միջոցն է ժողովրդեան հետ դէմ դիմաց գտնուելու և անոր մատնանիչ ընելու պարտականութիւնները զորս ունի կատարելու իր անձին, իր ընտանիքին ու իր ազգին հանդէպ. իսկ մարմնամարզութեան ընկերակցութիւնը եզական միջոցն է ցեղին ֆիզիքական կորովը անվթար պահելու, կայտառ ու անվեհեր ընելու զայն, և մանաւանդ անոր վրա-

յէն մէկդի վաներու յոռետեսութեան, սեւամողձութեան և արևուրութեան թանձր մեայլը որով կը յատկանշուի մեր ցեղը շղայնութեան այս ողբալի շրջանին մէջ :

Ու հաւատայէք որ արաստահամանի հայը բարոյական ու ֆիզիքական տարբեր հանգամանքներով պիտի ներկայանար այսօր, եթէ շատնց ի վեր այս երկու վերանորոգիչ միջոցները արուած ըլլային անոր՝ մատուրական ու մարմնական զարգացմանը համար :

Սակայն, տարակոյս չիկայ որ դեռ ամէն յոյս կորսուած չէ. ազէկ բաներն ընելու համար ժամանակ կայ միշտ : Նիւթակա՛ն, փոքր զոհողութեամբ և համերաշխութեան թեթեւ նախափորձերով՝ արաստահամանի ամէն հայարնակ կեդրոն կարող է ունենալ իր լսարանն ու իր մարզանքի ընկերակցութիւնը, կը բաւէ որ ամէն հայ այս երկու բարերար միջոցներուն պէտքը զգարու չոպի խելացութիւնն ունենայ :

Ամօթ է արաստահամանի հայութեան եթէ իր բարիքին համար այսչափ աննշան բան մը իրականացընելու անկարող ըլլայ, և ինքզինքը ներկայայնէ կուսակցականութեան ապուշ պայքարներով հեւացող ժողովուրդի այլանդակ զանգուած մը (\*):

Երուանդ Մումաէօխանլեան

(\*) Ամբարն կարեւոր կը նկատենք այս հարցը որ յատաշիկային պիտի վերադառնանք անոր :

Հ Ա Ր Ս Ն Ո Ւ Կ Ը

Իր անօր թերթերուն պոռոտ կարմրութիւնը տփուռնած էր, ու փափուկ կայտառութիւնը որով անիկա, գաշտերուն եւ հովիտներուն շիկափայլ հարսնուկը կը խորխտայ կանանչի միօրինակութեանը մէջտեղ, ա՛լ բոլորովին անհետացած էր : Իր նրբուզէջ ցօղունին վրայ հպարտօրէն տատանող հարսնուկը հիմա հոս, փողոցին ցեխերուն մէջ կը քաշկռուտի՝ կոխկռուած թերթիկներով, ջախջախուած ցօղունով, գունասա, տափակ ու թոյլ : Ո՛րքան մեղքցայ զինքը, հէ՛ք անտէրունջ հարսնուկ. ո՞ր անողորմ ձեռքը բրցուցած էր զայն ու գաշտի կուսական երանութենէն հեռացնելով բերած էր քաղաքի ապականութեան տիղմին մէջ անխղճօրէն լքած :

Ու մասներուս մէջ կը շօշափէի, սրտի իրական սեղմումով, անոր բարակ թերթերը, որոնք ճմուձկուած վար կը կախուէին ինչպէս գլխիկը թռչունի մը զոր անգութ գնդակ մը յանկարծ կերթայ շանթաւարել իր զուարթ թաշկոտումին մէջ : Կը շօշափէի մտած հարսնուկին փեթուած մարմինը որ ա՛լ քայքայման մէջ էր. ու անոր անկենդանութեան մէջ կը տեսնէի ՆՍԸ մարդուն որ՝ իր քմշոտ մէկ վայելմանը համար՝ դաշտերու այդ անողորմ զարդով փունջ մը շինեց, պահ մը վայելէց զայն եւ, երբ անոր նախկին հրապոյրը անհետացաւ, փողոցի ցեխին մէջ նետեց ապերախտ անգըթութեամբ մը :

Եւ բնութեան անկոխ վայրերէն քաղաքի խղճուկ մթնոլորտն ինկած այս հարսնուկը՝ գաղափարի զուգոր-

դու թեամբ մը՝ ինծի խորհել կուտայ  
այն գեղջուկներն ու գեղջուկիները  
որոնք, իրենց լեռնային շինական  
պարզուկ կեանքը թողլով կուգան  
քաղաքներու ապականութեան եւ  
պայմանադրական կեանքի մը կաշ-  
կանդումներուն մէջ կորսնցնել իրենց  
կայտառութիւնը, անհնգ ու միամիտ  
նկարագիրը: Դաշտերու վայրի ու  
սանձարձակ կեանքը, որ կեանքերու  
երջանկագոյնն է, հարսնուկին պէս  
կարմիր ու կայտառ կը մտնէ քաղաքէն  
ներս, ուր, սակայն, քաղաքակրթու-  
թեան պահանջկոտ պայմաններուն  
տակ կը սկսի քիչ քիչ նսեմանալ, վա-  
րակուիլ ապականութեամբ մը որուն  
երբեք չի կրնար հանդուրժել ու կը  
փճանայ:

Քաղաքներու ամբոխին բախման  
ներքեւ՝ հովիտներու ու դաշտերու  
աշխուժ բնակիչը ջախջախուած կիյ-  
նայ, մատնուըններէս սգեսպառ վար  
կախուող սա խղճալի ծաղկին նման,  
որուն նուրբ թերթիկները, չորցած  
ու փոշիացած՝ քիչ ժամանակէն պիտի  
անհետանան աշխարհի չորս հովերէն  
քշուելով դէպի անձանօթը, դէպի ան-  
հունութիւնը:

Ու սրտիս խորերէն երանի՛ կուտամ  
դաշտին մէջ իր ցօղունին վրայ հը-  
պարտօրէն երերացող բոսորագեղ  
հարսնուկին, ինչպէս նաեւ մարդկա-  
յին այն արարածներուն որոնք բը-  
նութեան կոյս ծոցին մէջ կեանքը  
կապրին անմեղ ու անխառն անգի-  
տակցութեամբ, հեռու քաղաքներու  
ցնորեցնող խժխուրքէն եւ սպառող  
կենցաղէն:

ԶԱՊԵԼ ՆՈՐԻԿԵԱՆ  
Սանահի Հոյկոսի կրթաբնի

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՆԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Նորութիւններ կան, մանաւանդ  
գիտական աշխարհին մէջ, որոնք  
ապշեցուցիչ ապաւորութիւն մը կը  
թողուն մեր վրայ եւ կան ալ որ շատ  
խելքի մօտ կը դանենք եւ չհաւա-  
տարու պէտքը չենք զգար կամ չենք  
մտածել սկեպտիկ ըլլալ:

Չգիտենք թէ ո՞ր դասակարգէն  
համարելու է այն լուրը — զոր ա-  
ռիթը ունեցանք վերջերս կարգալու-  
եւրոպական թերթի մը մէջ — թէ  
ինչ ինչ պայմաններով նոր մեռած  
մարդը վերակենդանացնելու փորձեր  
կըլլան:

Ժողովրդական առած մը կըսէ.  
« Երբ մարդ կը մեռնի, երկար ժա-  
մանակի համար է այն ». առի առա-  
ծէ աւելի ճշմարտութիւն մըն է,  
մանաւանդ որ աղքատ Ղազարոսէն  
յետոյ դեռ յարութիւն առնող մը  
չէ եղած մինչեւ ցարդ, թէեւ անոր  
համար ալ կըսեն թէ Ղլային խոր  
թմրութեան մը ենթարկուած էր  
որուն այսօր léthargie անունը կու-  
տայ բժշկութիւնը: Ինչ որ ալ ըլ-  
լայ, սա ճշմարիտ է որ միշտ փորձեր  
կըլլան մարդը երկար ապրեցնելու  
նպատակաւ եւ հիմակ ալ մեռնելէն  
յետոյ ողջնցնելու շնորհաւորելի  
ջանքերը կը շարունակեն:

Այս ջանքերէն ձեռք բերուած արդիւնքը որքան յուսաատու և քաջալերիչ, միջոցին գործադրութիւնը այնքան սարսափելի է :

Երեւակայեցէք որ մեր սիրելի էակներուն մարմինը պիտի ճզքեն — թէև մեռած վիճակնուն մէջ — կամ դանկը բանան՝ անոնց կեանք ստու համար : Ա.սի .քիչ մը վրդավիչ և անհաւատարի կը թուի, բայց երբ վաղը փորձերը որոշ և գոհացուցիչ արդիւնքներ տան, ո՛վ արդեօք չպիտի ուզէ վերաբուժին գուռը ասի առնել և անոր նշգրակին յանձնել իր սիրելոյն դեռ չպաղած դիակը :

Բարեբաղդաբար, եթէ ոչ բժշկութեան բայց վերաբուժութեան վրայ մեծ հուատք ունինք և ամենայն համբերութեամբ կրնանք ըստ պատել որ նոր և աւելի կատարելագործեալ փորձեր մեր յոյսերը պսակեն ու այսուհետեւ ունենանք մեռած և սղջնցած մարդեր ալ, փոխանակ « դացածը դացած է » ըսելով մխիթարուելու :

Մեր այս օրուան հաղարդելիք նութութիւնը ինքնին շատ նախնական պայմաններու մէջ կը ներկայանայ և կատարելագործուելու պէտք ունի :

Խտալացի կազմախօս մը՝ Պաթէլլի երեք չորս տարիէ ի վեր շունելու վրայ փորձեր կը կատարէ զանոնք մեռցնելէ յետոյ վերակենդանացնելու նպատակաւ :

Ելեկարականութեամբ, խղիւղով

կամ քլորօֆորմիլ շունին սրտին բաբախումները դադարեցնելէ յետոյ կուրծքը կը ճեղքէ, կողոսկրներէն մէկ երկու հատը կը կտրէ կը հանէ և շատ մեծ զգուշութեամբ սիրար տփին մէջ առնելով՝ կանոնաւոր և միօրինակ սեղմումներով, կրկին գործունէութեան վիճակի մէջ կը դնէ զայն . այսպէսով ասեամ է որ կենդանին աչքերը կը բանայ, ձայն կը հանէ, բայց դեռ ոչ մէկուն 22 ժամէն աւելի կեանք կըցած է ալ :

Թիւֆիէ և Հայիօն Ֆրանսայի մէջ հետեւելով Պաթէլլիի փորձերուն յաջողած են բոլորովին վաանգէ զերծ պահել քլորօֆորմիլ մեռցուած շուները, միայն թէ երկու տարբերութիւն դրած են իրենց և խտալացի բժշկին գործողութիւններուն մէջ, որոնց մին է՝ առանց կողոսկրները կարելու ոսկրամիջեան (intercostal) բացուածքէ մը հասնիլ սրտին, ինչ որ մեծ առաւելութիւն մըն է և առաջը կառնէ կարգ մը բորբոքումներու և երկրորդ՝ սրտին վրայ գործադրուելիք սեղմումները որոնք կարճ կը տեւէին, երկարել մինչեւ ի հարկին 20 վայրկեան և քիչ մըն ալ աւելի . այսպէսով շուները երկար առնն ապրած են :

Կը մնար մարդուն վրան ալ փորձել այս մէթոտը, ինչ որ չուշացու :

24 տարեկան երիտասարդ մը վերաբուժական ծանր գործողութիւն մը կրելէ չորս օր յետոյ յանկարծ զգայաղիւրկ կիյնայ : Տօքթ.

Թիւֆիէ կը տեսնէ որ սիրտը չի գործեր, անմիջապէս հարկ եղած դարմանները կընէ հիւանդը սթափեցնելու համար և երբ կը տեսնէ որ ամէն ջանք ապարդիւն կըլլայ, այն ատեն կը դիմէ նոր դրութեան. կը ճեղքէ երրորդ միջնոսկրէն, սիրտը կը գտնէ և 60-80 սեղմումներով կը յաջողի բազկերակը քալեցնել. մեռեալը աչքերը կը բանայ, գլուխը կը շարժէ, շուրջը կը նայի և բժիշկն իսկ կը ճանչնայ. սակայն այս ամէնքը կը տեսնեն երկու երեք վայրկեան միայն որմէ յետոյ հարկ կըլլայ կրկին փորձել, կրկին զարթնում միևնոյն երեւոյթներով, թէև աւելի կարճ և երրորդ անգամուան փորձը՝ արդիւնաւոր չըլլար ու մեռելը կրկին կը մեռնի, այս անգամ յաւիտեանապէս:

Դիագնոսթեան միջոցին կը տեսնուի որ թոքային երակը թխմուած է ու շատ հաւանական կը համարեն որ այդ եղած է անյաջողութեան պատճառը:

Երկրորդ փորձը դիպուածի արդիւնք է: Ուղեղի վրայ եղած գործողութեան մը միջոցին, կը դիտուի որ հիւանդը, որուն քլորօֆորմ տրուած էր, գաղբած է շնչելէ և սիրտը կայնած. ամբողջ ատար վայրկեան կաշխատին որ վերականգանութեան նշոյլ մը ձեռք բերեն, սակայն ի զուր կըլլան բոլոր թափուած ճիւղերը և ալ յուսահատելով


երբ վիրաբոյժը՝ Մարիօն՝ դեռ ուղեղը կը քննէր և կը խառչակէր, մտար հանդիպելով ուղեղածուծի (bulbe) մակերեւոյթին՝ մեռեալը երկա՛ր հռնդիւն մը կարճակէ 20 վայկեան մեռած մնալէ յետոյ, կը շարժի ու թոքերը կը սկսին գործել: Սակայն կը դիտուի որ երբ Մարիօն մտար ետ կը քաշէր, մեռեալը կրկին կը մեռնէր, ուստի հարկ կը տեսնուի փորձը կրկնել քանիցս որոյ միջոցին վերականգանութիւնները իրարու կը յաջորդեն մինչև որ մեռեալը բարբովին կը սթափի և կապրի 48 ժամ ու յետոյ կը մեռնի ուղեղին հիւանդութենէն և ոչ թէ շնչահեղձութենէն:

Տիէօլաֆուա այս դէպքը հաղորդելով բժշկական կաճառին՝ կաւելցնէ թէ ներկաներէն շատեր կարծեցով որ հիւանդը մեռած է ձգած գացած են և այն կէտը որ մարդու մը վերականգանանալուն պատճառ եղած էր, կենդանութեան կապն էր (noeud vital) որուն դպած էր վիրաբոյժին մտար:

Ահաւասիկ երկու դէպքեր որոնք այժմէն յոյսեր կը ներշնչեն: Վիրաբուժները կը կարծեն որ ջուրի մէջ խղբուելով, շնչահեղձութիւնով, երեկտրականութեամբ կամ քլորօֆորմի ազդեցութեան ներքեւ մեռնողները պիտի կրնան օգտուիլ այս դրութենէն եթէ անիկա առաջ տարուի և շոշափելի արդիւնքներ տայ:

Իբրև է որ դանկը բռնապը կամ հորժքը ճեղքելը շատ գիւրին և հաճելի դործողութիւններ չեն, սակայն վերջապէս երբ մարդ պիտի մեռնի . . . . :

Յ . Ս . ՓԱՓԱՋԵԱՆ



ՃՈՒՅԱՀԱՆԿԵՍՈՒՆ ԵՈՒՐՁԸ

Այն հոյակապ կադմակերպութիւնը՝ որ այսօր Բարիզը վերածած է հրաշալի դրախտի մը և որուն «ցուցահանդէս» անունը կուտան, — աշխարհիս մէկ մանրանկարը գրեթէ — կարգ մը տխուր մասձումներու առիթը կընծայէ ինծի:

Յետագարձ ակնարկ մը բւական է համոզուելու թէ ի՞նչ մեծամեծ ճիգեր հարկ եղան և ի՞նչ իրաւունքներ, արեան ձայներ և արդարութիւններ խեղդուեցան այդ ցուցահանդէսին յաջող շրջան մը բոլորել տալու համար:

Չարէն սկսեալ մինչև յետին խուհեմ ֆրանսացին ամէն միջոց ի գործ դրաւ որ Ֆրանսա պարծանքի և փառքի աղմուկով մը փակէ տասնըիններորդ դարը որ իրմէ Ալզա-Նոէնը առաւ տարաւ գուցէ անդառնալի կերպով:

Լահէյի վեհաժողովը՝ որ Չարին մէկ մեքենայութիւնն էր, Ֆաշտոսյի խնդրոյն մէջ Ֆրանսայի գլուխ ծռելը, Հայաստանի կոտորածներուն ծածկուիլը և Մակեդոնիոյ յուզումներուն զսպուիլը ամէնքը ձեռք ձեռքի տուած շինեցին ճուցահանդէսը որպէս զի պահ մը մուցնել տայ քաղաքականու-

թեան տաղտուկները՝ լուրջ խնդիրներէ չախորժող ֆրանսացիներուն և աշխարհի ուշադրութիւնը դէպի Բարիզ ձգուի, դիւանագէտները քիչ մը շունչ առնեն, թաղաւորները խնդրինքնին պտոյտի և այցելութիւններու տան և յոգնած միտքերը կազդուրուին:

Սակայն Անդլիա, անզգամ Անդլիան բան մըն ալ մտիկ չըրաւ. թնդանօթները ուղղեց դէպ ի Թրանսվալ և երբ Բարիզ արուեստահանդէսի բացումը կը կատարէին, անդին Ալպիոն Գիմպլըրին կազատէր, Պլէօմֆօնթէնի կը տիրէր և դեռ ցուցահանդէսը չը գոցուած, որ Բալէիստոֆորի մը վաղանցիկ պատրանքէն ուրիշ ու է ազդեցութիւն չպիտի ունենայ ամէն ուշիմ մտքերու վրայ, Բրէթօրիան գրաւուած է ու անդլիական դրօշը կը ծածանի Գրիւկէր նախագահի պալատին վրայ:

Տիեզերքի չորս կողմէն թագաւոր, իշխան, պաշտօնակալ, ամէնքն ալ հետաքրքիրներու, բախտախնդիրներու, զուարճամոլներու, զոգերու, աւազակներու և մտքով ու սրտով հիւանդոտ էակներու խումբերուն խառնուած, ձեռքերնին զրպաննին և սիկարը չրթունքներնուն կը վազեն կերթան հիանալու մարդկային ձեռարուեստի հրաշալիքներուն վրայ. ուրախ զուարթ կանցնին կը դառնան զարդարուն և հարուստ ապակեղաբաններու առջին, շքեղ ածուներու քովէն՝ ուր ծաղիկները իրենց կը ժպտին, կամարներու տակէն՝ յիմարի մը խօլ վաղքովը, մինչ անդին արիւնը յորդահոտան կը ներկէ Հայաստանի, Թրանսվալի և Չինաստանի հողերը:

Այն մեծ դռնէն անդին որուն սիւներուն վրայ ապիրատ կինը կը տիրապետէ դեռ կանգուն, հրճուանքը

կատարեալ է . հոն ինքնամուտացումի , հեշտանալու , զուարճանալու տենդը կը տիրէ , մինչ անդին հայը արիւն արցունք կուլայ հազար անէ՛քներով , պօէրը մահը կոկորդին մէջ սեղմած գեռ կը մաքառի իր եղբայրներուն դիակներուն վրայ :

Այդ կամարէն ներս հանդէսները մէկզմէկու կը յաջորդեն , խրախճանութիւնները անվերջանալի շարքերու կը վերածուին . բայց անդին յուղարկաւորները նահատակներու դազաղներ հողին կը յանձնեն , ալէլուաներ կերպէն եւ հագեհանգիստներ կը կատարեն :

Հոն պալատներ , հսկայ շէնքեր , կոթողներ ու հոյակերտ տաղաւարներ կանգնած են ոսկեկոյտերու շնորհիւ , մինչ անդին աղքատին հիւղակները անգամ կը քանդուին , տուներ կը փլցուին եւ քաղաքներ կը քայքայուին :

Նախագահ , նախարար , ղեկավան եւ աստիճանաւոր ամէնքն ալ հացկերոյթներու մէջ ուռած փորերնին կը պարտաքցեն , եւ անդին Հայաստանի մէջ խեղճ եւ անմեղ կին , մարդ , տղայ սովամահ կըլլան , Հնդկաստան հաց չգտներ ուտելու եւ ուրեջ տեղ ժողովուրդներ անօթի կը մնան :

Ի՞նչ պիտի ըլլայ այս զարհուրելի հակասութեանց վախճանը . հին ու նոր աշխարհերու այն մարդերը որոնք ժողովուրդներու ճակատագիրները կը վարեն անգութ ուղղադիտութեամբ մը , եթէ քսաներորդ դարուն շարունակեն ընել ինչ որ ըրին տասներիննեւրորդ դարուն մէջ , ապահովպէս ճշնշուած ամբողջ իր բուռնցքը ցոյց պիտի տայ ամենուն , բուռնցք մը որ լախախ հարուածի մը նման պիտի փչրէ ամէն բան :

Ա.Զ.Ա.ԻՍ

# Հ Ա Յ Կ Ի Ն Ե Ր Ն

ՈՒ

## Հ Ա Յ ՈՐ Բ Ե Ր Ը

Արտասահմանի բովանդակ եւ ուղեւ գործունէութեան մէջ հայ կնոջ դերը շատ աննշան տեղ մը կը բռնէ , նոյն իսկ՝ կարելի է ըսել՝ գրեթէ բնու ս ե է տեղ չի բռններ : Յեղափոխական գործին անհկաշատ երկրորդական մասնակցութիւն մը ունի . հանրային հանգամանք ունեցող ուրիշ պարագաներու մէջ ալ հայ կինը կը բացակայի : Բայց ամենէն աւելի գայթակղեցընող երեւոյթներէն մէկն է հայ կնոջ բռնած բացասական ընթացքը հայ սրբերու արտասուալից գործին հանդէպ : Յայտնի բան մըն է որ կինը ընդամին մասնագիտութիւն մը ունի ողորմասիրական գործերու համար . իր կարեկցող նկարագիրը իրեն կուտայ տարբեր ճարպիկութիւն մը եւ շնորհ մը ի վըրս հանելու ղթասիրական ձեռնարկները :

Մասնաւորապէս սրբերու անմուռանալի հարցն է որ ահագին աղմուկ յարուցանելու էր կնոջական շրջանակներու մէջ , որոնք սակայն անխլիրա ու անտարբեր հանդիսատեսի դերը ստանձնած կերեւան աշխարհի ամենէն աղէխարչ խնդիրներէն մէկուն հանդէպ : Դեռ անցեալ օր Բարիլի պէս տեղ մը մեր

որքերուն ի նպատակս յարուցուած աղմուկը և օտարներու ինքնամատոյց ու փութկոտ օժանդակութիւնը մեր անտէր անախրական մատաղ սերունդին կեանքի ապահովմանը համար, պերճաբարբառ ապացոյցներ էին խնդրին անյիճակի կարեւորութիւնը հաստատող : Արգ, հարց մը որուն օտարները այդքան եռանդեամբ կը հետաքրքրուէին և անոր միջազգային հանդամանք մը կուզէին առ, ի՛նչ տեսակ արամագրութիւն մը ստեղծելու է այն մարդոց մէջ իսկ որոնք ո՛ւղղակի պարտաւոր էին շահագրգռուիլ անով և զայն յաջողութեամբ ի դուրս հանելու համար իրենց բովանդակ բարեկամեցողութիւնը ի հանդէս բերելու էին :

Եւ մանաւանդ, ի՛նչ է պատճառը որ հայ կիներ իր ազգին անօթի որքերուն հանդէպ այս ոտսիճան պղտատնական դիրք մը բռնած է, ինք որ հրաշքներ կրնար գործել եթէ ուզէր :

Այս կէտը ոհաւասիկ կուզեմուսումնասիրել, ինչ որ շատ դժուար չէ, վասն զի օրինակ մը արդէն եկած է պայծառօրէն պարզելու այդ երեւոյթը :

Վառնայի մէջ որբախնամ շարժում մը սկսաւ, որուն մասնակցութեան բաժին մը ուզեց ունենալ իգական սեռը : Սկզբնաւորութիւնը գեղեցիկ էր և թերադրական և ահա զխառնեցաւ որ հայ կիներ

լիովին անտրամադիր է սրտանց և առանց ու և է նկատման փարելու իր ողորմասիրական պարտականութեանը, բաժնուած ըլլալով ծիծաղելիօրէն գաղափարական երեք հերձուածներու, որոնք են՝ բողոքողները, կուսակցականները և անտարբերները :

Բողոքները՝ ու և իյէ նպատակի համար դրամ ապէ խուսափող սրամաշուք արարածներն են որոնք խենդուխելու և սնամջ գոնե գտաներ ունին իրենց շրթներուն վրայ : օրինակի համար, սապէս առարկութիւններ կ'ունեն : « մենք այս տեսակ բաներու շատ դրամ տուած ենք (իբր թէ հայ ազգը երկար ատեն է ի վեր պարբերաբար որբ ունեցած ըլլար) : բայց մեր դրամները գայթակղական տեսարաններէ և կամ գատարտնները զբաղեցնելէ ուրիշ բանի չեն ծառայած » : և այս ըսքանչելի պտտճառաբանութեամբ ամէն պատասխանատուութենէ իբր թէ ազատուած՝ երեսդ կը նային յաղթական կերպով : այս խեղճ կիները չեն գիտեր որ այդօրինակ ողորմելի փոստաբանութիւններ երբեք չեն զօրեր դադրեցնելու մեր հէք անաէրունջ որբիկներուն աղիւսողորմ աղաղակները : Քանի մը տարի առաջ, մեր ազգային հիւանդանոցին յուր մատակարարութեան մասին ամէն օր գայթակղական լուրեր կը կարգայինք թերթերու մէջ : քսամներ զեղծումներ տեղի կու

նենային հոն . բայց սսոնք բնաւ պատճառ չեղան որ խեղցի մարդիկ լքանեն ազգին տունը . ընդհակառակը մեծ ճիգերով ու զոհողութիւններով բարեկարգեցին զայն , ու այսօր գրեթէ օրինակելի հաստատութիւն մը եղած է : Եւ յետոյ , այդ բողոքող կիներէն ո՞րը իր զաւակը անօթի կը ձգէ՝ անոր համար ծախսուած դրամը գէշ կերպով գործածուած ըլլալու առարկութեամբ :

Յետոյ կուգան կուսակցականները . վասն զի կիներն ուլ , առանց ու է օգտակարութիւն ունենալու յեղափոխութեան , կուսակցականութեան հիւսնողութենէն բռնուած են : Ասոնք ամենէն աւելի շիղերու կը դպչին . առանց ընթացքին մէջ աւելի վայրագ , աւելի ընդվզիչ անգթութիւն մը կայ , որովհետեւ անխաիր ամէն բան կը զոհեն իրենց ետական կիրքին : Կարծեմ աւելորդ է ծանրանալ այս դատակարգին մէջ բերած առարկութեանը վրայ որբերու գործին չաջակցելու համար , պարզապէս սա է որ գործին նախաձեռնարկները կը պատկանին այս կամ այն կուսակցութեան , որ բնաւ վստահութիւն չի ներշնչեր : Եւ այս սկզբունքէն ճամբայ ելլելով՝ կուզեն քանդել սկսուած գործն ալ : Խեղճ որբեր , կրնայի՞ն մտածել որ կուսակցամուրթեան արհաւիրքին իրենք ևս պիտի ենթարկուէին : Վերջապէս կուգան անտարբեր-

ները , որոնք զաւելչապահան հանդիսաւորութեամբ կը ծանուցանեն ձեզ թէ երբեք չեն շահագրգռուիր « որբի մորբի » պէս աննշան խնդիրներով : Արդէն առանց մտենալը բուրավիին աւելորդ բան է . անոնք ազգ չունին , մարդկութեան ցեցերն են , որ իրենց բուսական ապուշ կեանքին աւելորթեանը միջոցին միշտ բան մը կը պակսեցնեն աշխարհքէն առանց բան մը ձգելու հոն :

Վերջերս ընտանեկան շրջանակի մը մէջ բարեկամ մը վեհանձնօրէն գիտել կուտար թէ « կիները գեղեցիկ սեւ կը կոչուին ոչ թէ իրենց մարմնական այլ իրենց հոգեկան գողարիկ շտրհներուն համար » : Այս խօսքը որ ճշմարտութիւն մը ըլլալ կերեւայ , չեմ գիտեր թէ որչափ հաճոյք պատճառեց ներկայ գտնուող կիներուն : Բայց իսկու թիւնը այն է որ մեր ազգային որբի ողբալի կացութեան մէջ , ուր ամենէն աւելի երեւան գալու են գողար ու սփոփարար յատկութիւններ , ինչո՞ւ մեր գեղեցիկ սեւը ամէն ճիգ կը թափէ իրեն վերագրուած այդ ընդամին յատկութիւններուն անգութ ու ցաւալի հերքում մը տալ , տարտամ , անդոյն ու պախարակելի վերաբերում մը յոյց տալով որբերու աղաղակող հարցին նկատմամբ :

Ի . Ն .



### Մ Ա Ն Ա Ն Ջ Ը

( Աւանդավեպ )

Երբոր թիրոս արթնցաւ, արեւը արդէն երկար ատենէ ի վեր իր լուսահեղձ շառայլները կը սփռէր խրճիթին փսիաթներուն վրայ: Չրկնորսը երեժկտալուն պէս, իր դեռ քնատ աչքերովը փնտոնեց ուռկանը, զոր լմնցնելու համար գիշերուան մէկ մասը կատաղօրէն աշխատած էր: Ուռկանը կը կախուէր ճեպճերմակ, ճկուն վէտվէտու մներով փռելով իր սեղմօղակները բացգոյն կնիւնին վրայ:

Եւ թիրոսի նրբին շրթները կը բացուէին գոհունակ ժպտով մը, լուսաւորելով իր մթին դէմքը՝ խուսափուկ աչքերով. քիչ յետոյ, երբ ձուկ որսալու ատեն հանդիպէր Տէլիասի, պիտի կրնար հեզօրէն ըսել անոր.

— Չըսի՞ր, դրացի, թէ քու ուռկանդ որ ամենէն փոքր ձուկը բռնելու կարող է, նմանը չունէր աշխարհի մէջ... լա՛ւ, հիմակ իմինս նայէ:

Եւ ձեռքերը կը շփէր, ուրախանալով այն գաղափարէն թէ իր ընկերը ապահովապէս պիտի այնքան նեղանար որքան ինք նեղացած էր առջի օրը երբ Տէլիաս շատ պարզ կերպով իրեն ցուցուցած էր իր նոր գընած ուռկանը:

Թիրոս եւ Տէլիաս տղայութենէ կը ճանչնային զիրար եւ բարեկամութեամբ կապուած կը թուէին իրարու: Բայց եթէ Տէլիաս յանձին թիրոսի կը տեսնար իր հաճոյքներուն ընկերը, իր ուրախութեանց բաժնեկիցը, իր ցաւերուն մխիթարիչը, թիրոս Տէլիասը կը նկատէր գձուձ հակառակօրդ մը միայն:

Նախանձը կը թունաւորէր իր հոգին եւ ա՛լ այն աստիճանին կը հասնէր որ բնաւ ո եւ է երջանկութիւն չէր զգար երբ կը մտածէր թէ իր խորապէս ատած անձն ալ կը մասնակցէր կեանքին բարեքններուն:

Մէկէնիմէկ, երբ արեւի աւելի անգաղտնապահ ճառագայթ մը եկաւ այրել թիրոսի դէմքը, Տէլիասի ձայնը զուարթօրէն թնդաց ճամբուն վրայ:

Երագողը մէկ ոտամամբ ոտքի ելաւ, այդ վաղաժաման զուարթութենէն խսկոյն մտահոգ: Իր բարեկամին ուրախութենէն ի՞նչ նոր տանջանք պիտի ծնէր իրեն համար: Տանը զուռը ծածկող կերպասը վեր առնուելուն պէս, թիրոս փիբերան մնաց:

Մինչեւ գետակը, որ կը հոսէր պայծառաշող ու խաղաղիկ, երջանկօրէն մըմնջալով փերուռ նրբախայտ աւազներուն մէջ որոնց զանակները կը փաղփէին, Տէլիաս տերեւներով ու ծաղկըներով գծած էր ճամբայ մը անուշաբոյր, սունական ճամբայ մը որ իր առնէն մինչեւ գետակ կերկարէր:

— Կարծես, դիտել տուաւ թիրոս, հոսանքը կարեւոր այցելու մը պիտի բերէ քեզ:

— Այո, բարեկամ, պատասխանեց Տէլիաս, դէմքը երանութեամբ շողարձակ, հոսանքը որ ամէն օր կեանք կը բերէ ինձի՝ ուռկաններս լեցնելով, վաղը սէր պիտի բերէ: Անանկ որ ամէն բան իմ սիրելի գետակիս պիտի պարտիմ:

- Ի՞նչ ըսել կուզես:
- Նշանածիս կը սպասեմ, զեղանի ու քաղցր Միճաին, զոր կը սիրեմ եւ որմէ կը սիրուիմ:
- Կը կարգուի՞ս:
- Այո:
- Բան մը չէիր ըսած:

— Կուզէի յանկարծակիի բերել քեզ, բարեկամ, պատասխանեց Տէլիաս ծիծաղկոտ:

— Անիծած, այսինքն թէ կուզէիր ստորնացնել զիս մտածելով որ կատաղութենէ պիտի ճաթէի եթէ դուն ընկերուհի մը պանայիր, մինչ ես միս մինակս կը մնայի:

— Բայց ամենեւին, բողոքեց Տէլիաս:

— Այո, այո... ես ըսածս գիտեմ, դուն զիս վերաւորելով միայն երջանիկ կըլլաս... վկայ սա ուռկանը զոր անցեալ օր դադոնապէս գնեցիր. կըսէիր որ մէկհատիկ է: Ստախօս, անոր յարեւմանը ես ալ ունիմ... Աւելին կայ, այս առտու իսկ դուրս կելլայի — զարմանքէդ մտի՛ր — նմանապէս պատրաստելու երջանկութեանս ճամբան... քուկիտէդ աւելի գեղեցիկ պիտի ըլլայ, անուշահոտ նիւթերով օժուած... Այո, պատուական բարեկամս, կիմացնեմ քեզ որ հոսանքը միեւնոյն ճիգովը պիտի բերէ իմ ընկերուհիս եւ քուկիտը:

Տէլիասի դէմքը աւելի գուարթացաւ:

— Ուրախ եմ, վասն զի Միծա իսկոյն բարեկամուհի մը պիտի ունենայ:

— Տեսնենք քու ընկերուհիդ իմինիս հետ աղէկ վարուիլ գիտէ՞:

Եւ աճապարանօք թիբոս տուն դարձաւ՝ աւելի որոշ հարցումներէ նեղուելու վախով:

Դուր փակուելուն պէս ձկնորսը ինկաւ փսիաթին վրայ, դեռ ցնցուած այն սուտէն որ խոյս տուած էր իր շրթներէն՝ անոր հետեւանքներուն վրայ մտածելու ժամանակ չունեցած:

Պոսեցեալի չէր սպասեր, վասն զի մինչեւ այդ օրը երբեք միտք չէր ըրած իր սուտէն ներս ժպտուն ու գորո-

վատիրտ կին մը մտցունել: Բայց քանի որ միւսը կամուսնանար, ինքն ալ կուզէր ամուսնանալ, որպէս զի դրացիին ընտանեկան ուրախութիւնը չը տառապեցնէ զինքը:

Այո, բայց ո՞ւրեք կըթալ կին մը գտնել: Ուսերը թոթուեց արհամարհանքով. բէ՛հ, կ'օգտէր որ իրիկուան երթար պանանենիներու ծառուղին, ուր պիտի գտնար կուսական ճերմակ ծաղկով պճնուած աղջիկ մը, որ պիտի հաճէր իրեն հետ կենակցել:

Իրիկուան, համակ մթին ու համակ խորհրդաւոր ծառուղիին երկայնքը, զայն եզերող պանանենիներու լայն տարեւներուն տակ մտաւ թիբոս: Բայց մեծ սրամտութեամբ մինչեւ ճամալայրին ծայրը գնաց առանց մէկուն հանդիպելու: Թիբոս, ծայրը հասնելուն, ես զարձաւ այնքան կատաղած որ աստուածները կամբաստանէր իբրեւ մեղսակից Տէլիասի, որուն կը դաշնակցէին զինքը ստորնացնելու համար:

Յանկարծ, սեւ կոճղով ծառի մը ստորոտէն հեծիւններ իր ուշք գրաւեցին: Ծռելով տեսաւ փոքր աղջիկ մը ինքիւր վրայ կծկուած որ՝ նրեւը ձեռու ընկերուն մէջ՝ դառնապէս կուլար:

— Ինչո՞ւ կողբաս, հարցուց թիբոս:

— Աւա՛ղ, երիցս աւա՛ղ, պատասխանեց աղջիկը հեծեծալով. երկար ատենէ ի վեր այս ծառուղին կուգամ սպասելու անոր որ զիս իր տունը պիտի տանի որպէս զի ես իբրեւ հաւատարիմ ամուսին ու անձնուէր աղախին, տունը մաքրեմ ու կրակը պատրաստեմ: Շատ չանցած ճերմակ դժեր պիտի պիտակեն մազերուս սեւութիւնը, խորչումներ պիտի աղօսեն դէմքս ու դեռ ան չպիտի դայ:

Թիբոս սփոփանքի հասօչ մը ար-

ձակեց եւ ձեռքն անոր կարկանդակով մրմնջեց .

— Եթէ ուզես, ես պիտի ըլլամ այն որուն կ'սպասես :

Յաջորդ օրը, այն ժամուն ուր արեւը իր լուսաշող վեհափառութեամբը կը ցանցնուի փողփողենէջ, երկու երիտասարդները գետափին վրայ, իրենց տօնական ճամբաներուն ծայրը զորս պճնազարգած էին կանանչ դափնիներով եւ յարգարած ամրան ամենազգի ծաղկներով, կ'սպասէին իրենց խօսեցեալներուն :

Յանկարձ' անդորր գետակին վրայ թնդացին թեւճակներու բախումներ եւ ձայներ բարձրացան որոնք մեղմօրէն կերգէին համերգ մը՝ գողցես մէկ խանդազատագին հառաչը գետակին :

Յետոյ մակոյկները երեւցան, ծանր մակոյկներ բարձր ցուկներով, անօսը շղարչներով պաստառուած, որոնք ջուրին մէջ կերկարածգուէին :

Մերձաւոր ազգականներով շրջապատուած, որոնք զարգարուած էին իրենց ամենէն գեղեցիկ հանդերձներովը եւ ամենէն ծանրագին գոհարներովը, երկու ձկնորսները նշմարեցին իրենց նշանածները՝ հագուած իրենց կուսական սպիտակ պարեգօտը :

— Ահա իմ սիրեցեալս, գոչեց Տէլիաս խանդավառ :

Եւ, Թիրոսի քիչ մը վրդովուած ձայնը, իբրեւ արձագանգ, կրկնեց .

— Ահա իմ ընտրեալս :

— Շատ երջանիկ ես, դրացի, հարցուց Տէլիաս :

— Քենէ՛ աւելի, պատասխանեց Թիրոս :

Վերջապէս մակոյկները ցամաք մօտեցան : Եւ մինչ ամէն սովորութիւն մոռնալով Տէլիաս լիաշուրթի կը համբուրէր իր սիրելի պզտիկ Միճան,

Թիրոս գոռոզաբար ներէշէին կը ցուցնէր թէ իրենց ծաղկեայ գորգը աւելի թանձր էր քան դրացիինը :

Հարսնիքէն քանի մը օր ետք, Թիրոս սոսկալի բարկացաւ : Տէլիասէն աւելի պերճ երեւնալու համար բոլոր ունեցածը վատնած էր, եւ պարապ պարկերուն ու չոր տիկերուն առջեւ ամուսնոյն ընտանիքը կը կշտամբէր զինք կողոպտած ըլլալուն :

Մանկամարդ կինը խտաբարոյ էր, մինչեւ այն ատեն ամուսին մը գտած չըլլալուն էն թեթեւ պատճառներէն մէկը : Քանի մը չար պատասխաններէ յետոյ, կինը անանկ ձախող կերպով նետեց ջուրի սափորը որ էրկան վրան գլուխը թըջեցաւ : Այս արկածը փոխանակ զինքը հանդարտեցնելու աւելի կատղեցուց . Թիրոս բոռնցքի հարուածներ տուաւ կնոջը, որ փութաց պատասխանել նոյն ձեւով : Բայց կռուի պահուն, դրացի ամուսին երգերն ու երջանիկ ծիծաղները լսուեցան : Այն ատեն, թողով ներէշէն, Թիրոս գուռ վաղեց եւ զայրոյթէ գեռ գողգող իր ձայնովը սկսաւ երգել . « Երջանկութիւնս անհո՛ւն է » :

Շատ չանցած կռիւները սովորական դարձան, այնպէս որ մէկ խրճիթէն համբոյրի ու ծիծաղի ձայներ կը բարձրանային, միւսէն ճիչեր ու հարուածի ազմուկ :

Տղաքներ, գետափին վրայ, կըսէին .

— Տէլիասի տունը երկրորդ տաճարն է Սուրկաի, արեւի չաստուծոյն, ամպերու յաղթականին, բոցի ու սիրոյ բաշխիչին . իսկ Թիրոսի խրճիթը կայցելէ Եաման, որ կ'իշխէ խաւարչուտ բնակութեանց վրայ եւ ամպն ու դժբախտութիւնը առաջ կը բերէ :

Եւ թիրոս, ստամբակներուն կատակները լսելով, զայրոյթէն կը մեռնէր:

Իր հակառակորդին ըրածը կընէր, եւ չարաբախտօրէն՝ ինչ որ կը յաջողէր Տէլիասի՝ կը ձախողէր իրեն համար: Միասին կը բանային դրուններին, մէկէն ժպտող ներս կը մըտնէր, միւսէն արցունքը իրենց պարտէզները պատկից էին. բարեկամինը ծածկուած էր ծաղկներով ու պտուղներով, իրենը լեցուած էր փուշերով եւ տատակներով. գետակն իսկ անիրաւ կ'երեւար, փճացնելով իր դործիները, քշելով տանելով իր խայծերը, մինչ Տէլիաս, փոթորիկը նախատեսելով, միշտ ժամանակ կը գտնէր իրենները: պատուաբարելու:

Եւ թիրոս, այս դժբախտութեանց համար փոխանակ ինքզինքն ամբաստանելու, չաստուածներէն լքուած կարծելով ինքզինքը, ճամբայ ելաւ անոնց աղերս մատուցանելու:

Անհուն մեհեանէն՝ որ վեհափառօրէն կը կանգնէր նուիրական տեղւոյն վրայ իր ծանրակուռ սիւներովն ու բարձրաբերձ գմբեթովը, ներս մտաւ ծնրադիր եւ մարմարէ սալաքարերուն վրայ քաշկուտուեցաւ մինչեւ չաստուածը որ, իր կանանչ պղնձի անշարժութեանը մէջ կը մնար կծկուած՝ աչքերը կիսախուփ, երանական կեցուածքով մը:

Երեք անգամ ճակասը գետնին զարնելէն յետոյ, թիրոս հեծեց.

— Չաստուած, հազարիցս մեծ ու հզօր, հաճէ վերջապէս նշմարել իմ դժբախտութիւնս, հաճէ վերջապէս ըմբռնել քու անիրաւութիւնդ: Ես միշտ հաւատարմօրէն հնազանդեցայ քու օրէնքներուդ, միշտ կանոնաւորապէս բերի ընծաս, եւ օր մը զանց

չըրի աղօթքներս: Սակայն դուն երբեք չմտածեցիր հնազանդ զաւկիդ վրայ: Մինակ իմ դրացիս, չար Տէլիասը, կրցաւ վայելել քու շնորհներդ: Հազարիցս մեծդ Աստուած, գըթա՛ ինձի...:

Եւ իր նեղ ու կեղծ աչքերէն, իր վշտին անկեղծութեանը մէջ, արցունքներ կը վաղէին, մինչ ինք իր խօսքերը կընդհատէր հարուածներ տալով կուրծքին:

Այն ատեն բարձրէն, անծայր մեհեանին բարձրէն ձայն մը ելաւ.

— Թիրոս, չաստուածները երբեք չլքեցին քեզ: Մինակ, զո՛ւն չգիտցար օգտուիլ անոնց շնորհներէն... Դուն սրտիդ մէջ աճեցուցիր նախանձի խստաժէտ ծաղիկը, որ իր ճեղերուն տակ խզկեց ապրելու ուրախութիւնը... բըցո՛ւր զայն ու երջանիկ պիտի ըլլաս...:

Թիրոսի արցունքները կրկնապատկուեցան.

— Հզօր ու գթա՛ծ Աստուած, կերդնում որ նախանձը չեմ գիտեր ինչ է, մինակ չարաբախտութիւնն է որ դիս կըմբոստացնէ:

— Շատ աղէկ, ցուցնելու համար որ կը մեղքնամ քեզ, ուխտ մը ըրէ, եւ ես կը խոստանամ ընդունիլ զայն:

Թիրոս անհուն ուրախութեամբ լցուեցաւ. բայց ձայնը չարունակեց.

— Ընտրէ՛, բայց գիացիր որ ինչ ալ ըլլայ ըզձանքդ, անփնջապէս քու Տէլիաս դրացիդ ալ պիտի վայելէ միեւնոյն շնորհը:

Ձկնորսին բուռնցքը սեղմուեցան, աչքերը արիւն ցայտեցին:

Տէլիաս, նորէն Տէլիաս, միշտ Տէլիաս:

Հարստութիւն խնդրելով, հակառակորդին համար ալ խնդրած պիտի

ըլլար. առողջութիւն ուղիւով, պահոված կըլլար կեանքը այն մարդուն որուն մեռնիլը կուզէր. երջանկութիւն բաղձալով, դրացիինը տեսնելու կը դատապարտուէր...

Այն ատեն, աւելի խոնարհելով, խնդրեց.

— Տէր, հանէ՛ աչքիս մէկը:

Թ.բ.բ.

### Ո Ր Բ Ա Խ Ն Ա Մ Ը

Տեղւոյս որբախնամը իր եռամսեայ հաշուեկշիւը խմբագրութեանս զրկած է հրատարակութեան համար, ինչ որ կարելի չլիտի ըլլայ տեղի անձկութեան պատճառով: Այդ հաշուեկշիւէն կերևայ թէ նորակազմ որբախնամը երեք ամսուան միջոցին յաջողեր է 536.70 ֆլորանք հաւաքել, գումար մը որ շատ լաւ գաղափար մը կուտայ ազնիւ նախաձեռնողներուն աշխատութեան եզրանակին վրայ: Հաշուեկշիւն մանրամասնութեանը մէջ ուշագրբաւ կէտեր կան. այսպէս, տիկնանց մասնաճիւղին եռամսեայ հաշուեկշիւը կը ներկայացնէ ըկ 29.80 ֆր. ի գումար մը որ, ընդհակառակը, շատ դէժ գաղափար մը կուտայ վառնայի զեղեցիկ սեռին որբատիրական զգացումներուն վրայ: Ասոր դէմ տիրաւար երեւոյթ մըն է մատաղ ուսանողութեան ցոյց տուած եռանդը իր որբ եղբայրներուն վիճակին հանդէպ. ազգ.

վարժարանի ուսանողուհիները հաւաքած են 4.40 ֆր. իսկ Հայկական կրթարանի երկսեռ ուսանողները հանգանակած են 19.20 ֆր. ի գումարը:

Այժմ՝ ընկերութեան սնտուկին մէջ պատրաստ կայ 485.20 ֆր. ուսկից մօտ օրերս վարապայ վանքի որբանոցին մէջ խնամուելիք մէկ որբին տարեկան ծախքը պիտի զրկուի պատրիարքարանի միջոցաւ. իսկ Սերասարից և Ակնայ որբանոցներէն դեռ պատասխան չէ տուուեր այդ անշերտն մէջ խնամուելիք որբերուն համար:

Ինչպէս կերևայ, նորակազմ որբախնամը յաջող սկզբնաւորութիւն մը կունենայ և յուսադրել կուտայ որ ձեռնարկած գործը անվհատօրէն առաջ պիտի աանի, ու իր օրինակը թերադրիչ խրտխոյս մը պիտի հանդիսանայ նաև ոչ միայն բոլոր Պուլիարիոյ հայաբնակ քաղաքներու մեր ազգակիցներուն, այլ և Ռուսմանիոյ տեղացի ու գաղթական հայութեան: Ինչպէս մեր վերջին թուով ծանուցինք, Շումլու և Ռուսուք շարժիլ սկսած են արգէն. կը մնան միւս քաղաքները, որոնք անկարելի է որ իրենց մասնակցութեան բաժինը չը բերեն մեր որբերուն փրկութեանը համար ըսկըսուած այսքան գովելի ու այսքան օրհնալիլ գործի մը:

Отговорилъ Н. Драгулевъ

Переводъ «Орденъ» — Варна.

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Հաստատում 1898 Սեպտեմբեր 1 ին

ՎԱՌՆԱ

Կրթական Նախարարութեան 11128 թիւ արտօնադրով

Գ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

Կ'ընդունուին գիշերօթիկ աշակերտներ՝ դահացուցիչ պայմաններով :

Առողջ սնունդ , կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք :

Ուսումնց եւ գիտութեանց ամէն ճիւղեր կ'աւանդուին :

Օտար ըզուններէն պարտաւորիչ են պուկարերէնը եւ ֆուսիսերէնը : Փափաքողները կրնան հետեւիլ նաեւ անգղիերէնի կամ գերմաներէնի դասընթացքին :

Ձութակի եւ դաշնակի դասեր ալ կը տրուին մասնաւոր վճարումներով :

Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար՝ դիմել հիմնական իր-անօրէնին , հետեւեալ հասցեով՝

GRON MICAËLIAN

PENSIONNAT ARMÉNIEN

VARNA (Bulgarie)

Կը փութանք ծանուցանել խմբադրութեան գիմող հայ որբերու յատկացեալ Բացառիկ թերթի բաժանորդներուն որ այն թերթի ապագրութիւնը աւարտած չէ դեռ . երբ աւարտի կը ծանուցանենք Բագրնալիսով :

« ԲԱՉՄԱՎԷՊ »

# ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ Ա Ռ Ն Ա

Երկրորդ քաղ, Շիրազենսիա փողոց, (Սագալլո լեշմեի կից)

Կը սպագրուին հայերէն, պուրկարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեատմո, հասցեստմո, հարսանեկան հրատիրագիր, սղգարարութիւն, նամակազրուխ, պահարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, դերք, քաղեր, և այլն:

Գունաւոր և ոսկեզօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ ստաներ և մասնաւոր գործիքներ կը զանուին:

Մ Ե Ս Ի Ն Ա Մ Ք Ե Ի Մ Ս Ք Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Ի Լ Ն Ի Ը Յ Ո Յ Թ Գ Ի Ի Բ Ա Մ Ս Տ Յ Ե Լ Ի

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նշուրեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).

*Handwritten notes in Armenian and French:*  
Հ. Եզրու  
Imprimerie  
այ. ամս 24  
հասցի  
Varna  
INA